12. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ

12.1. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 63-2.3-32)

Մասնակցում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքների համակարգմանը: Մասնակցում է Մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքների համակարգմանը: Աջակցում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, ագրարային ոլորտում տնտեսվարող այլ սուբյեկտներին արտադրության կազմակերպման ու զարգացման գործում: Մասնակցում է Մարզի տարածքի սերմնաբուծական կազմակերպությունների, տոհմաբուծարանների և արհեստական սերմնավորման կայանների գործունեության համակարգմանը: Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցումը, պահպանումը և շահագործումը, միջոցներ է ձեռնարկում հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ: Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Մարզի տարածքում ջրատնտեսական և ոռոգման կազմակերպությունների գործունեության համակարգմանը: Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը: Իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը Մարզի տարածքում:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝ գյուղական և ձկնային տնտեսություն մասնագիտությունների գծով,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «ա» ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 13.2 ենթակետին հաջորդող պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 20.03.2013թ.՝ ժամը 1415-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):